Առ Նըշուվիւք լուսաբորբոք արեգական,
Ցիշատակաց մէն մի պակաս սերտ սիրելեաց.
Որոց փոխան՝ ծաղկանց Նըւէր
Դառն արտասուս սիրտ իմ քամէր։

Հ. Ա. Ե.

Ցուցիս.

Ի յուլիս ամսոյ, որ է Թամուզ[1]*, արժան է 'ի յայս ամսուս զՀին այգիքն վաստակել, ոչ յամէն օրն 'ի բուն՝ այլ առաւօտն սկսիր մինչ երեք պահն լինի աւուրն վաստակէ՝ և Թող. և երբ ընդ տահրայն*[2] *և ընդ ինն պահն անցնի օրն՝ ապալ*[3] *վայր վաստակէ մինչև 'ի մութն. և յակնրցնելն ծածկէ զտնկին տակքն որ արևն չաւերէ. և գքուցն*[4] *մանրել է պարտ անհնար*[5]*, զի գղցան փոչին սրնցընող է և մեծցնող կուզին և պտղին։ Եւ յայս ամիս է պարտ զպատերն շինել, և զմորենին տնկել, զի լաւ բանէ։ Եւ 'ի սոյն ամիս վաստակէ զսիզուտ*[6] *և զՀիլանու վայրան. սակայն տես որ լուսնին վեշտասաներորդ օրն լինի, և արեգակն 'ի խեցգետինն. և երբ վաստակիս՝ Թող որ չորնայ՝ և ապա ժողովէ. զի եթէ երբ կանաչ լինի ժողովես՝ այլում վայր բունի. և պատեհ է յեղել զՀերկեղն 'ի մայիսոյ եօթնեւտասան աւուրն 'ի վեր, մինչև 'ի Թամուզն, որ մնանէ լուսին յայծեղջիւրն. և 'ի Թամուզոյն վեշտասաներորդ օրն պարտ է ժողովել զխոտն և 'ի դուրս ձգել որ այլ չլինի։ Եւ եթէ պակասութիւն կենայ փայտի՝ որ վասն շինման հարկաւոր պէտք է, նա կտրէ այս ամիս երբ փլէ լուսինն, և զՀերկ կամ զՀերկոտն՝ որ բակլայ կամ ճուղպան լինի ցանած և քաղած, զգետինն 'ի նոյն ամիս վաստրկէ, նա խամ հերկ մի արժենայ. նոյնպէս եթէ այլ խամ գետին չունենայ ոք՝ որ փոփոխէ, նա երբ հնձէ զարտն՝ զինչ որ լինի, նա մինչդեռ խոզանն դալար լինի՝ պատեհ է մինակ զլուծքն 'ի ներքս դնել և վաստակել, որ աշունն այլ վայր ցանես. կամ հերկն խափան Թողուս մինչև 'ի մէկ այլ տարին՝ ըստ գետնի տեղւոյն ուժոյ։ Նոյնպէս և յայս ամիս կտրեն զծառանցն և զթփին տերևն. հնձեն զդաշտաց խոտն և չորցնեն և պահեն ձմեռան համար. զի Թամուզն յօտած ծառանցն և պատրուսացն՝ իբր գարունն է բուսցնող։*

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

Տկարութիւն և զօրութիւն ձեռնտուլեալ միմեանց՝ գովելոյ արժանի են. զի տկարութիւն՝ զխոնարհութիւն և ըզքաղցրաբանութիւն ուսուցանէ, և յուսով կալ առ իրաւունս արդար դատաւորին Քրիստոսի. իսկ զօրաւորքն ճըշմարտեալք՝ բերդ ամուր լեալ տկարացն՝ և օգնական և տուիչ բարեաց. որք ընդունելոց են զանեղծութիւն և զանանց փառն. որք միմեամբք զանուանն առնուն և զհատուցումն յարարչէն։

Ցիմարութիւն և իմաստութիւն պիտոյ են յերկրաւոր վարս. յիմարն զհաւանութիւն և զհնազանդութիւն առ իմաստունն ունի, գիտել առ 'ի նմանէ զլաւն. զի իմաստութիւն զառաջնորդական միտս ստացեալ ունի։

ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

---

1 Ըստ Հրէից և Տաճկաց։
2 Միջօրէ։
3 Թուի ապա այլ վայր, այսինքն դէս անգամ, նորէն։
4 Թուի գոռդն, հողի կոշտ։
5 Ցոյժ, շատ։
6 Ջրոտ խոտոտ տեղ։